ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/93, 19.11.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆրեզեն» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՍԳԼ-ԵՄԾՁԲ-19/41» երկփուլ մրցույթ

Գնման առարկան՝ Հեմոդիալիզի սեանսի անցկացման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել ՍԳԼ-ԵՄԾՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ՍԳԼ-ԵՄԾՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ք. Երևան

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող.1

Բողոք բերող անձ՝
Տնօրեն Հրանտ Պիվազյան
«Ֆրեզեն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 6
Էլ. փոստ՝ frezen1@mail.ru
Հեռ: +37491412494

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Գյուրջյան 10, Երևան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՍԳԼ-ԵՄՄՀԲ-19/41
Գնման ընթացակարգի առարկան՝
հեմոդիալիզի սեանսի անցկացման ծառայությունների ձեռքբերում

ՏԵՂԱԿՍԵՑԻՐ
ՍԵՂԱԿՍՈՒՄ
N V-52054-1
19. 11. 19

ԲՈՂՈՔ

1. Բողոքի առարկան

Սույն թվականի նոյեմբերի 06-ին *հեմոդիալիզի սեանսի անցկացման ծառայությունների* ձեռքբերման նպատակով ՀՀ ԱՆ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է *ՍԳԼ-ԵՄՄՀԲ-19/41* ծածկագրով երկու փուլով մրցույթի հնարավոր մասնակիցների որոշման նախառակավորման ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/: Մեր կազմակերպությունը, 2007թ.-ից հանդիսանալով դիալիզի սարքավորումների և դիալիզի սեանսների ժամանակ օգտագործվող տարբեր ծախսանյութերի առաջատար մատակարար, լրջագույն կերպով ուսումնասիրել է մրցույթի հայտարարությունը, և, մեր կարծիքով, այստեղ առկա են մի շարք անհամապատասխանություններ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների հետ, իսկ այս պայմաններով կայացած մրցույթն ու արդյունքում և կնքված պայմանագիրը չեն կարող լինել օրինաչափ:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը

2.1. Հայտարարությունից դատելով, գնման առարկա է հանդիսանում **հեմոդիալիզի սեանսի անցկացման ծառայությունը:** *ՍԳԼ-ԵՄՄՀԲ-19/41* ծածկագրով երկու փուլով մրցույթի հնարավոր մասնակիցների որոշման նախառակավորման ընթացակարգի հրավերի /այսուհետ՝ հրավեր/ 13-րդ կետով սահմանված է.

«13. Նախառակավորման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է՝

1) բավարարի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին: Ընդ որում համանման են համարվում բժշկական նշանակության ապրանքների կամ սարքավորումների մատակարարված լինելը:»:

Ցանկանում ենք բողոքներ բնող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ չնայած հրավերով սահմանված է, որ ձեռք է բերվում հեմոդիալիզի սեանսի անցկացման ծառայություն, սակայն համանման է համարվում բժշկական նշանակության ապրանքների կամ սարքավորումների մատակարարված լինելը: Այս պարագայում բժշկական նշանակության ապրանքների կամ սարքավորումների մատակարարված լինելը մասնագիտական գործունեության գնահատման չափանիշ համարելը, սխալ է: Առաջին հերթին, սխալը զուտ օրենսդրական է, այսինքն՝ ծառայությունների մատուցման մրցույթի համար մասնագիտական փորձառությունը գնահատվելու է ոչ թե ծառայության մատուցման պայմանագրերի հիման վրա, այլ՝ ապրանքների մատակարարման պայմանագրերի: Բացի այդ, այստեղ մենք կարող ենք առնչվել նաև զուտ բժշկական տեսանկյունից հիվանդի համար կենսական կարևորություն ունեցող բուժական միջոցառման՝ մասնագիտական փորձառություն չունենալու հետևանքով սխալ կազմակերպման, և, արդյունքում, բուժառուի կյանքին սպառնացող վտանգների հետ, ինչը, կարծում ենք, Պատվիրատուն անուշադրության է մատնել:

ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որ սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Տվյալ պարագայում հեմոդիալիզի սեանսի անցկացման ծառայությունը և բժշկական նշանակության ապրանքների կամ սարքավորումների մատակարարված լինելը ակնհայտ է որ չեն կարող դասվել նույն տնտեսական գործունեության խմբում:

Վերը նշվածի վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուն հնարավոր մասնակիցների գնահատելու սխալ որակավորման չափանիշ է սահմանել:

Հայտարարության ավելի մանրամասն ուսումնասիրության ընթացքում պարզ է դառնում, որ Պատվիրատուն որևէ տեղ չի նկարագրել պահանջվող ծառայությունը: Կցված տեխնիկական բնութագրերը վերաբերում են միայն սարքավորումներին՝ դիալիզի սարք, ջրամաքրման կայան, դիալիզի բազկաթոռներ: Հայտարարության 9-րդ կետում սահմանված է.

«9. Բժշկական կետրոնի կողմից կկատարվեն ամսեկան վճարումներ մատուցված ծառայությունների դիմաց՝ ապրանքների մատակարարում, սարքերի սպասարկում:»: Տվյալ ձևակերպումը անհասկանալի է, հնարավոր չէ հստակ պատկերացնել Պատվիրատուն ենթադրում է ապրանքների դիմաց վճարում և արդյոք այդ ապրանքները հանձնվելու են Պատվիրատուին ի սեփականություն, թե ծառայություն մատուցող ընկերությունը դրանք ժամանակավորապես տրամադրելու է Պատվիրատուին՝ ծառայությունը մատուցելիս: Եթե Պատվիրատուն ենթադրում է, որ ապրանքները հանձնվելու են ի սեփականություն, ապա տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե ծառայությունների այլ ապրանքների ձեռքբերման հետ, այն էլ խմբավորված մեկ չափաբաժնում, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որը սահմանում է, որ *արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում:*

3.Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասին 1-ին ենթակետով խնդրում եմ.

1. Պարտավորեցնել ՍԳԼ-ԵՄՇՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ՍԳԼ-ԵՄՇՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգը:

Կից ներկայացնում եմ.

1. Տուրքի վճարման անդորրագիրը.
2. ՍԳԼ-ԵՄՇՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը:
4. Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Բողոքը ներկայացնող անձ՝

18.11.2019թ.